ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

23 սեպտեմբերի 2023թ. **N 61-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության 20.09.2023թ. դիմումով ներկայացվել են հետևյալ հանգամանքները.

«Թիվ 1/11 և 1/03 տեղամասերի քվեարկության արդյունքների ամփոփման արձանագրություններում տեղ գտած տվյալների միջև արձանագրվել են հակասություններ, ինչի հիման վրա փոփոխության են ենթարկվել որոշ ելակետային տվյալները:

Մասնավորապես,թիվ 1/03 տեղամասի արձանագրությունում ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվն ու քվեարկության մասնակիցների թիվը (517) ավել է եղել բոլոր թեկնածուների կողմ քվեարկած և անվավեր քվեաթերթիկների հանրագումարի (515) համեմատ: ԸԸՀ-ն եզրակացրել է,որ տարբերությունը պայմանավորված է կտրոն ստացած որոշ ընտրողների կողմից ընտրություն չկատարելով, և ԿԸՀ հետ խորհրդակցելուց հետո ՏԸՀ նախագահին և քարտուղարին հրահանգել են փոփոխել ընտրական պարագաների պարկի հետ ԸԸՀ ներկայացված 2 արձանագրություններում ներառված՝ քվեարկության մասնակիցների թիվը և ընտրողներից ստացված կտրոնների թիվը՝ դրանք դարձնելով 515: Կատարված փոփոխությունները ԸԸՀ-ի կողմից չեն գրանցվել գրանցամատյանում:

1/11 տեղամասի երկու արձանագրություններում ևս եղել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ որպես քվեարկության մասնակիցների թիվ և ընտրողներից ստացված տեխնիկական սարքվորմամբ տպված կտրոնների թիվ նշվել է 603-ը, այնինչ բոլոր կուսակցություններին կողմ քվեարկած և անվավեր քվեաթերթիկների հանրագումարը կազմել է 606: Տեղամասային հանձնաժողովի նախագահն ու քարտուղարը՝ միմյանց հետ քննարկելով՝ հայտարարել են, թե «Հանրային ձայն» կուսակցության կողմ քվեարկած թերթիկների թիվն արձանագրվել է սխալ, 73-ի փոխարեն՝ 79-ը: Այս դեպքում ևս ԸԸՀ հանձնարարականով փոփոխվել են, թե «Հանրային ձայն» կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը (73), թե քվեարկության մասնակիցների թիվն ու ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվը (600):

2/47, 2/48, 2/27, 2/17, 2/51, 2/16, 2/24 և 4/31 ընտրատեղամասերից ներկայացված պարկերը ստիպված բացվել են, քանի որ հանձնաժողովները սխալմամբ դրանց մեջ էին

տեղադրել ընտրողների ցուցակների փաթեթները,որոնք պետք է ներկայացվեին պարկի հետ մեկտեղ, սակայն դրանից դուրս:

Նույնական խնդիր է արձանագրվել նաև 3/31, 5/08, 5/15, 5/3, 5/19, 5/13, 6/41, 9/9, 9/25, 9/26, 9/43, 9/59 ընտրատեղամասերի փաթեթների հետ կապված: Առաջացել է անհրաժեշտություն մեծ պարկը բացելու և այնտեղից հանելու մի քանի պարագաներ, որոնք չպետք է այնտեղ լինեին:

4/23 տեղամասի դեպքում պարկը բացվել է, քանի որ դրա մեջ տեղադրված են եղել այնպիսի պարագաներ/ ընտրական ցուցակները/, որոնք պետք է լինեին փոքր փաթեթների մեջ, իսկ փոքր փաթեթների մեջ հակառակը՝ տեղադրված են եղել պարկի մեջ տեղադրման ենթակա փաստաթղթեր:

Նույնական խնդիրներ են /պարկերում տեղադրման ոչ ենթակա ընտրական փաստաթղթեր/ պարագաների առկայության կամ դրանցում տեղադրման ենթակա փաստաթղթերի՝ փոքր փաթեթներում տեղադրման դեպքերի/ արձանագրվել են 5/4, 8/5, 9/9, 9/25, 9/26, 9/43, 9/59 տեղամասերի մասով:

5/17, 5/14, 5/07 ընտրատեղամասերի ներկայացրած արձանագրություններում եղել են մի շարք անճշտություններ,մասնավորապես՝ արձանագրվել են ընտրողներից ստացված քվեարկության կտրոնների թվի և չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թվի գումարի և տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թվի տարբերություններ: Անճշտությունների արձանագրման հիման վրա ՏԸՀ անդամները ուղղումներ են մտցրել արդյունքների ամփոփման արձանագրությունների մեջ:

7/03, 7/04 և 7/47 ընտրատեղամասերի ընտրական պարկերը գտնվել են բաց վիճակում, որոնց մասով կազմվել է արձանագրություն և բոլորը փակվել են:

3/5 ՏԸՀ-ն անավարտ արձանագրություններ էր ներկայացրել ԸԸՀ, արձանագրությունն ավարտել են ԸԸՀ-ում:

9/24 ՏԸՀ-ի անդամները չէին ստորագրել արձանագրությունները և այդ տեսքով էին ներկայացրել ԸԸՀ: Ժամը 05:00-ին անդամներին կանչել են ԸԸՀ, որպեսզի ստորագրեն:»:

Ուսումնասիրելով ներկայացված հանգամանքները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 73-րդ հոդվածով սահմանված են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրություններն ստանալուց հետո:

Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները

կազմելու վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով: Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով մուտքագրում է համակարգիչ՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով: Համակարգչային ծրագիրը ներառում է տվյալների սխալ մուտքագրումից պաշտպանող ողջամիտ երաշխիքներ: (…):»:

Թիվ 1/03 ընտրական տեղամասի վերաբերյալ ներկայացված հանգամանքի մասով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահից պահանջվել է բացատրություն: Հանձնաժողովի նախագահ Ա.Այվազյանի բանավոր բացատրության համաձայն՝ նշված տեղամասում երկու ընտրող նույնականացվել են և ստացել տեխնիկական սարքավորման միջոցով տպված կտրոն, այնուհետև ստորագրել են ընտրողների ցուցակում, ստացել՝ քվեաթերթիկներ և քվեարկության ծրար, սակայն չեն քվեարկել, և այդ երկու դեպքերը թիվ 1/03 տեղամասային ընտրական հանձնաժողովն իր գրանցամատյանում արձանագրել է: Ուսումնասիրելով թիվ 1/03 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 1/03 տեղամասային ընտրական հանձնա-ժողովի գրանցամատյանի 17 և 20 էջերում նշված միջադեպերի վերաբերյալ առկա են համապատասխան արձանագրություններ, ըստ որոնց ընտրողներ Ռ.Ավետիսյանը, Լ.Կարապետյանը քվեախցիկից դուրս գալուց հետո, քվեաթերթիկները պատռել են, տեխնիկական սարքավորման միջոցով տպված կտրոնները թողել և հեռացել են:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները համակարգչային ծրագրի միջոցով մուտքագրելուց անհամապատասխանությունը պարզվել է և կատարվել է ուղղում՝ հիմք ունենալով նաև թիվ 1/03 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի համապատասխան արձանագրությունները:

Ինչ վերաբերում է թիվ 1/11 ընտրական տեղամասի արձանագրությունների մասով ներկայացված հանգամանքին, ապա թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկել է թիվ 1/11 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները և վերահաշվարկի արդյունքում որպես քվեարկության մասնակիցների թիվ արձանագրել է 603, ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվ՝ 603, «Հանրային ձայն» կուսակցության կողմ քվեարկած թերթիկների թիվն արձանագրվել է 75, և անճշտությունների չափն արձանագրվել է 3:

Թիվ 5/17 և 5/14 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նշված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրություններում ուղղումներ առկա չեն:

Ինչ վերաբերում է թիվ 5/07 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունների մասով ներկայացված հանգամանքին, ապա թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկել է թիվ 5/07 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները և վերահաշվարկի արդյունքում որպես ընտրողներից ստացված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվ արձանագրել է 606, չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թիվ՝ 1294, տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թիվ արձանագրված է 1900, և որևէ անճշտություն չի արձանագրվել:

Ինչ վերաբերում է 2/47, 2/48, 2/27, 2/17, 2/51, 2/16, 2/24, 4/31, 3/31, 5/08, 5/15, 5/3, 5/19, 5/13, 6/41, 9/9, 9/25, 9/26, 9/43, 9/59, 4/23, 5/4, 8/5 ընտրական տեղամասերի ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից բացելու հանգամանքին, ապա նշված ընտրական տեղամասերի մեկանգամյա օգտագործման պարկերը բացելու անհրաժեշտությունը պայմանավորված է եղել ընտրողների ցուցակների սկանավորման և սկանավորված ցուցակների հրապարակման գործընթացն ապահովելու նպատակով:

Թիվ 3/05 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից անավարտ արձանագրություններ ներկայացնելու, թիվ 9/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից արձանագրությունները չստորագրելու և այդ բացթողումներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում շտկելու հանգամանքների կապակցությամբ, հարկ է նկատել, որ Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի կանոնակարգումների համաձայն՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները կազմելու վավերականության ստուգումն ենթադրում է նաև արձանագրության այնպիսի վավերապայմանների առկայության ստուգում, ինչպիսիք են՝ արձանագրության կազմման ամսաթվի և ժամի առկայությունը, հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների ստորագրությունների, հանձնաժողովի կնիքի առկայությունը և այլն: Հետևաբար, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն իրենց պարտավորությունների շրջանակներում ձեռնարկել են անհրաժեշտ միջոցներ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից կազմված քվեարկության արդյունքների արձանագրությունների վավերականությունն ապահովելու ուղղությամբ:

Թիվ 7/03, 7/04 և 7/47 ընտրական տեղամասերի ընտրական փաստաթղթերի պարկերը բաց վիճակում ներկայացնելու հանգամանքն արձանագրվել է հենց ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը համադրել է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում և քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություններում արձանագրված տվյալները, որևէ տարբերություն կամ անհամապատասխանություն չի արձանագրել, ուսումնասիրել է նաև թիվ 7/03, 7/04 և 7/47 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները, որտեղ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտում չի արձանագրվել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ սույն որոշման շրջանակներում ուսումնասիրված հանգամանքները չեն ազդել քվեարկության արդյունքների վրա:

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սույն վարչական վարույթի շրջանակներում ուսումնասիրված հանգամանքները չեն ազդել Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քվեարկության արդյունքների վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. Հովակիմյան**